ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՀՆՈՐԴԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ «ՀՀ ԱՆ ԱԱԻ-ԳՀԾՁԲ-19/1 »-1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

Ք. Երևան «08» հունվար 2019թ.

ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ն, ի դեմս Ա. Բազարչյանի, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Աքսոլյուտ Սեքյուրիթի» ՍՊԸ-ն/ այսուհետ՝ Կատարող՝/ի դեմս տնօրեն Ա.Հարությունյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա/երկուսը միասին՝ այսուհետ Կողմեր/, հիմք ընդունելով 2018 թվականի դեկտեմբերի 20-ին կնքած «ՀՀ ԱՆ ԱԱԻ -ԳՀԾՁԲ-19/1»-1 Պայմանագրի 7.15 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին

## Համաձայնագրի առարկան

**1.1** Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ծառայության գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված N 1 և N 2 -ի:

1.2 Կատարողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով և ժամկետներում Պատվիրատուին մատակարարել Պայմանագրի տեխնիկական բնութագրով նախատեսված ծառայությունը՝ համաձայն N1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

## 2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 2280000 (երկու միլիոն երկու հարյուր ութսուն հազար ) ՀՀ դրամ, որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները, այդ թվում նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

## 3.Այլ պայմաններ

3.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն համաձայնագիրը կազմված է 2(երկու ) էջից, կնքվում է հայերեն ՝2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 4 . ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ և ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**Պատվիրատու**

ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ

Հասցե՝ Կոմիտաս 49/4

ՀՎՀՀ 00011624

Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Արաբկիր մասնաճյուղ
h/h 163058101441

Տնօրեն՝_______________Ա. Բազարչյան

**Կատարող**

«Աբսոլյուտ Սեքյուրիթի» ՍՊԸ

Բանկ՝ «Կոնվերսբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1930059796310100

ՀՎՀՀ՝ 02655038

Հասցե ք. Երևան Աբովյան փ3

Տնօրեն՝_______________Հարությունյան

Հավելված N 1
« 08 » հունվար 2019 թ. կնքված
«ՀՀ ԱՆ ԱԱԻ - ԳՀԾՁԲ- 19/1 »-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | Ժամկետը** |
| 1 | 75241100 | Անհրաժեշտ է իրականացնել պահնորդական ծառայություն: Աշխատակիցները պետք է ունենան ՀՀ օրենքով սահմանված կարգով պահնորդի որակավորում և ապահովված լինեն ծառայությունն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցներով: Ծառայությունը պետք է իրականացվի 12 ժամյա գրաֆիկով, շաբաթվա բոլոր օրերին, առավոտյան ժամը 09:00-ից մինչև 21:00-ն, ներառյալ հանգստի և տոն օրերը: Պահնորդական ծառայություն իրականացնելու ընթացքում անհրաժեշտ է.իրականացնել հասարակական կարգի վերահսկողություն,կանխել նյութական արժեքների չարտոնված տեղաշարժը,արագ արձագանքել արտակարգ իրավիճակների դեպքերում (հրդեհ, երկրաշարժ, ահաբեկչություն և այլն), ձեռնարկելով իրավիճակից բխող միջոցառումներ,արգելել կողմնակի անձանց մուտքը,իրականացնել Պատվիրատուի կողմից սահմանված այլ անվտանգության և պահակային կանոններ,բակ թույլատրել մուտք գործել միայն աշխատակիցների ավտոմեքենաներին,ամենօրյա շրջայց կատարել շենքի ներսումապահովել անվտանգության աշխատակցի առկայությունը<br><br>իրականացնել Պատվիրատուի կողմից | դրամ | 2280 000 | 1 | Կոմիտաս 49/4 շենք | 08.01.2019թ 31.12.2019թ: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | սահմանված այլ անվտանգության և պահակային կանոններ: Կատարողը պատասխանատվություն է կրում այն վնասի համար, որը նրա կողմից անհրաժեշտ անվտանգության և պահպանության միջոցառումներ չիրականացնելու հետևանքով հասցվել է Պատվիրատուին նյութական վնաս՝ ունեցվածքի կողոպտման, ոչնչացման, փչացման, հրդեհման կամ այլ ոտնձգությունների ճանապարհով: Այս բոլոր պայմանները պարտադիր են, ներառված են պայմանագրի գնի մեջ և իրականացվում են Կատարողի կողմից: | | | | | |
| | | | | | | | |

**Պատվիրատու**

ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ

Հասցե՝ Կոմիտաս 49/4

ՀՎՀՀ 00011624

Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ

Արաբկիր մասնաճյուղ

հ/հ 163058101441

Տնօրեն՝ ________________ Ա. Բազարչյան

**Կատարող**

«Աբսոլյուտ Սեքյուրիթի» ՍՊԸ

Բանկ՝ «Կոնվերսբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1930059796310100

ՀՎՀՀ՝ 02655038

Հասցե ք. Երևան, Աբովյան փ3

Տնօրեն՝ ________________ Ա. Հարությունյան

Հավելված N 2

« 08 » հունվար 2019 թ. կնքված

«ՀՀ ԱՆ ԱԱԻ - ԳՀԾՁԲ- 19/1 » -1 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդ ամենը |
| 1 | 75241100 | Պահնորդային ծառայություն | - | 1900000 | 3800000 | 5700000 | 7600000 | 9500000 | 11400000 | 13300000 | 15200000 | 17100000 | 19000000 | 22800000 | 22800000 |

**Պատվիրատու**

ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ

Հասցե՝ Կոմիտաս 49/4

ՀՎՀՀ 00011624

Բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Արաբկիր մասնաճյուղ

հ/հ 163058101441

Տնօրեն՝ ____________ Ս. Բազարչյան

**Կատարող**

«Աբսոլյուտ Սեքյուրիթի» ՍՊԸ

Բանկ՝ «Կոնվերսբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1930059796310100

ՀՎՀՀ 02655038

Հասցե՝ [illegible] փ3

Տնօրեն՝ ____________ Ս. Հարությունյան